ՀՀ Կոտայքի Մարզ

<<Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

<<Խաչքարագործություն>> խմբակի

Թեմատիկ պլանավորում

Առարկա՝ <<Տեխնոլոգիա>> տղաներ

Ուսուցիչ՝ Վ. Մկրտչյան

2023-2024 ուստարի

Նախաբան

Խաչը, որպես խորհրդանիշ, մեզանում առաջացել է դեռևս 4-րդ դարից սկսած: 4-7-րդ դարերում դրանք ունեցել են շատ պարզունակ պատկերներ: 7-րդ դարից հետո ի հայտ են եկել թևավոր խաչքարերը, որոնցից շատ քչերն են այսօր պահպանվել: 8-րդ դարից հետո ստեղծվում են արդեն ուղղանկյուն կանգուն ծաչքարերի տեսակները: Իսկ 11-րդ դարից հետո ձևավորվում է որպես ներկայիս խաչքար հայտնի հասկացությունը՝ իր մեջ կրելով բոլոր երկրաչափական և բուսական տարրերը: Հետագայում այն արդեն իր մեջ սկսում է կրել նաև պատկերային՝ ինչպիսիք են, օրինակ սրբի պատկերները:

Խաչքարի հիմնական հումքը դեղնակարմրավուն տուֆն է: Այն զարդարվում էր ազգային խորհրդանիշ հանդիսացող խաղողի և նռան պատկերներով: Խաչքարի ստորին հատվածում շատ հաճախ փորագրվում էր նաև հավերժության նշան, որը նույնպես հոգևոր խորհրդանիշներից մեկն էր: Այն խաչի հետ միասին խորհրդանշում է կյանքի շարունակականությունն ու ազգային պատկերացումը խաչի մասին: Խաչի ամենայուրահատուկ հորինվածքի տարրն իր անվերջության նշանն է:

Խաչի վրա գոյություն ունի 5 կարևոր և նվիրական կետ: Դրանցից 4-ը համապատասխանում են խաչի 4 թևերին, իսկ մեկը դրանց հատման կետն է: Հատման կետը միջնադարում կոչվել է նաև ակ, որը խորհրդանշում է երկնքի արքայությունը: Ներքևի կետը խորհրդանշում է դժոխքի կործանումը: Աջ կողմը կապված է շնորհների բաշխման հետ, իսկ ձախ կողմը՝ մեղքերի թողման:

Շատ հետաքրքիր և կարևոր է նաև խաչքարի տեղադրման կարգը, որի ամենակարևոր դրվագը օծումն է: Նախ օծվում է խաչի կենտրոնը՝ակը, այնուհետև՝ թագը, այսինքն խաչքարի վերին մասը,այնուհետև ձախ և աջ կողմերը, իսկ վերջում, արդեն ստորին հատվածը՝ բունը: Օծելության կարգը իրականացվում է հատուկ շարականներով:

Խաչքարագործությունն անընդհատ կատարելագործվելով հասել է այնպիսի մակարդակի, որ որոշ աշխատանքներ ներկայացնելիս այն համեմատում են գորգագործության և ասեղնագործության հետ:

Ժամանակակից արվեստների և արհեստների ցանկում այժմ էլ իր ուրույն տեղն է զբաղեցնում խաչքարագործությունը:

Սույնով նպատակ ունենք դպրոցի աշակերտների շրջանում լուսաբանել խաչքարագործությունը և սեր ու հարգանք սերմանել գեղեցիկի նկատմամբ:

Նպատակը

1. Խմբակի անդամներին սովորեցնել ճանաչել և գնահատել հայկական նախշազարդերը:
2. Խորացնել գիտելիքները պրակտիկ աշխատանքի կազմակերպման և պլանավորման մեջ:
3. Վեր հանել միջառարկայական կապեր:
4. Զարգացնել ճանաչողական հմտություններ:
5. Զուգահեռների միջոցով բացահայտել կապը փայտի գեղարվեստական փորագրության միջև:
6. Խորացնել գրաֆիկայի և կոմպոզիցիայի գիտելիքների կիրառումը փորագրության համար նախատեսցված էքիզների կատարման ընթացքում:
7. Ամրապնդել գծագրական գործիքներով աշխատելու հմտությունները:
8. Վեր հանել փայտի և քարի վրա փորագրելու նմանություններն ու տարբերությունները:
9. Ակտիվացնել խմբակի անդամների համագործակցային կարողությունները:
10. Նպաստել որպեսզի անընդհատ կատարելագործվի վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, համադրելու, միմյանցից սովորելու և սովորեցնելու կարողությունները:
11. Խմբակի գործունեության ողջ ընթացքում սովորեցնել փորագրության նրբությունները, սովորեցնել չհիասթափվել փոքր անհաջողություններից:
12. Նպաստել սեփական մտահղացմամբ ստեղծագործել և կատարել ինքնուրույն աշխատանք:
13. Կազմակերպել խմբակի մասնակից անդամների կատարած աշխատանքների ցուցադրություն:

Թեմատիկ պլանավորում

Ներածություն

1. (1 ժամ) – Խմբակի աշակերտներին ծանոթացնել խմբակի գործունեությանը և պահանջներին:
   - Վեր հանել միջառարկայական կապեր (Գծագրություն, նկարչություն, ֆիզիկա, տեխնոլոգիա),
   - Զարգացնել վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, համադրելու կարողություններ:
   - Ձևավորել գիտելիքներ աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության կանոնների պահպանման բնագավառում
2. (1ժամ) – Աշխատատեղ

   Աշխատատեղը պետք է կահավորել այնպես, որ գործիքներն ու անհրաժեշտ պարագաները դրված լինեն նախատեսված վայրում և դրանցից օգտվելը լիմնի հարմար:

   Անհրաժեշտ պարագաներ՝ ռետինե տակդիր, ակնոց, խոզանակ, սրաքար, հղկաթուղթ, քանոն, մատիտ, տպիչ:
3. (2 ժամ) Աշխատանքային գործիքներ: Դրանց տեսականին (մուրճ, հատիչներ, բիզ) և օգտագործման ձևերը:
4. (1 ժամ) Նյութի ընտրություն (տուֆ, մարմար և այլն) հաշվի առնելով պահանջվող չափը և գույնը, ճաքերի բացակայությունը, ծակոտկենությունը և միատարրությունը:
5. (4 ժամ) Քարի նախնական մշակում ձեռքի և էլեկտրական գործիքներով:
6. (2 ժամ) Ծանոթություն գծագրման կանոնների հետ՝ հաշվի առնելով նյութը, որի վրա պետք է փորագրել և նրա չափերը:
7. (2 ժամ) Գործիքների օգտագործման ձևերը,
8. (1 ժամ) Պարզագույն գծագրի կատարում թղթի վրա:
9. (2 ժամ) Գծագրի փոխանցումը քարի վրա:

   Փոխանցման եղանակներ՝

   Միանգամյա և բազմակի օգտագործման

10. (12 ժամ) Պարզագույն մասնիկի փորագրություն մեկ և մեկից ավելի գործիքներով:
11. (12 ժամ) Պարզագույն երկրաչափական մասնիկների փորագրություն:
12. (2 ժամ) Հետին պլանի մշակում;
13. (2 ժամ) Հղկում և վերջնամշակում:
14. (12 ժամ) Պարզագույն բուսական մասնիկի փորագրություն:
15. (2 ժամ) Հետին պլանի մշակում:
16. (2 ժամ) Հղկում և վերջնամշակում:

17. (12 ժամ) Կենդանական պատկերի փորագրություն:
18. (2 ժամ) Հետին պլանի մշակում:
19. (2 ժամ) Հղկում և վերջնամշակում:
20. (2 ժամ) Կատարել խաչքարի գծագրում:
21. (12 ժամ) Խաչքարի փորագրություն:
22. (12 ժամ) Ինքնուրույն, ստեղծագործական աշխատանք:
23. (1 ժամ) խմբակի մասնակից անդամների կատարած աշխատանքների ցուցադրություն:

Վերջնարդյունքները

1. Խմբակի յուրաքանչյուր անդամ չի լինի անտարբեր և կգնահատի հայ վարպետի ձեռքով կերտած յուրաքանչյուր խաչքար:
2. Աշխատանքի ճիշտ կազմակերպումն ու պլանավորումն աշակերտի համար կդառնա օրինաչափություն: Կգնահատի հումքը, կմտածի նյութի խնայողաբար օգտագործման մասին:
3. Կտեղեկանա փայտի և քարի վրա փորագրության ընդհանրություններն:
4. Կկարողանա գրաֆիկայի և կոմպոզիցիայի մասին իր գիտելիքները կիրառել էսքիզների կատարման ժամանակ:
5. Կամրապնդի գծագրական գործիքներով աշխատելու իր կարողությունները:
6. Կիմանա, թե որոնք են քարի և փայտանյութի վրա փորագրելու դրական և բացասական կողմերը:
7. Խմբակի անդամները կսովորեն հարգել միմյանց, կգնահատեն իր և ընկերոջ կատարած աշխատանքը:
   Այդ ընթացքում կսովորեն սովորել և սովորեցնել:
8. Միասնական գործով կսովորեն հաղթահարել առաջացող փոքր անհաջողությունները:
9. Կկարողանան ստեղծագործել և կատարել ինքնուրույն աշխատանք:
   կկազմակերպենք խմբակի մասնակից անդամների կատարած փոքրիկ աշխատանքների ցուցահանդես: